Շնորհս 'ի Տեառնէ՝ այսինքն Ֆելով 'ի տեղիս իւրեանց հաստատուն մինչև ցայսօր և մինչև որում ժամանակի որ սկզբանէ աւանդեցաւ նոցայ Ֆել, այլ միմիայն փոփոխական բնութիւնս մեր որ անօրինեցաւ և անցաւ ընդ Օրինօք՝ արտաքսեցաւ 'ի տեղէ և 'ի ընակութենէ և փառաց իւրմէ, և զրկեցաւ 'ի ազատութենէ կենաց գրաւեցաւ 'ի ծառայութիւնս մահու և այլն։ Կամիմ ասել թէ որքան առաւելագոյն է լրբութիւն մեր և որքան հպարտութեամբ միտս մեր որ ոչ կամեցաք չափիլ զօրութիւնս մեր ընդ զօրութեան երկնային զօրաց և պատուանդանին երկնի՝ այսինքն հաստատութիւն երկրի, և ոչ 'ի միտ առաք եթէ անօրէնութեամբ առաւելանալ բնութիւնս և կամ պատիւս մեր կարէ լինել զի արդ բարձրագոյնք և զօրեղագոյնք, կարևորագոյնք քան զմեզ ոչ կամեցան անօրինել, թէպէտ ես ոչ դիտեմ և ես ոչ ասեմ, թէ զի արդ բնութիւնս մեր անօրինեցաւ և շարն իմ ոչ է 'ի վերայ այսմ մտածութեան եթէ ոչ յատկապէս յայտնի և հաւատալի ձեզ առնելոյ, զի որպէս հաւատի է անհերկմտելի որ ոչ եղև և ոչ լինիլ կարէ ոչինչ 'ի ներքոյ արեգական եթէ ոչ ունիցի Օրէնս 'ի ընթացս իւր 'ի որ ոք ճանապարհ և գործս իւր, և ամենայն գործ ընդ դէմ Օրինաց և սահմանի է միայնակ պատճառ աւերման գործոյն, որպէս 'ի վեր ասացելոյս, այլ այսպէս